Ե. Թադէոսեան.— Աստուածածին,
զոր կը պաշարեն Սահակ եւ Մեսրոպ ու տասեր-
կու առաքեալներ :
Ագուլիսի Յղնա գիւղի եկեղեցւոյն համար նկարուած, 1905–ին:

digitised by A.R.A.R.@

Ե· Թադէոսեան·— «Անուրջ»
(Նկարուած 1902–ին: Կը գտնուի Երեւանի Պետ· Թանգարանը):

ՆԿԱՐԻՉ ԵՂԻՇԷ ԹԱԴԷՈՍԵԱՆ

Եղիշէ Թադէոսեան մին է մեծագոյն արուեստագէտներէն զոր հայ ցեղն արտադրած է: Ան եղած է իսկական նկարիչ մը, այդ բառին ամենէն բարձր իմաստով, իր արհեստին գաղտնիքներուն խորապէս գիտակ, այլ եւ ան հետամուտ եղած է միշտ իր բազմաթիւ ու տարօրինակ այլազան գործերուն մէջ դնել նուրբ ու կենդանի բանաստեղծութիւն մը, արտայայտելու համար բնութեան բիւրակերպ գեղեցկութիւնները, կեանքի խորհուրդն ու մարդկային հոգին: Ան, հաւատարիմ իր խառնուածքին ու իր տեսութեանց, մնացած է միշտ ռոմանթիկ իրապաշտ մը, չուզելով ոչ մի եւ է գիջում ընել գեղեցկագիտական նորամոլութեան, ոչ ալ բռնադատական կամ ընկերային այս կամ այն վարդապետութեան գործիք դարձնել Արուեստը: Ան միշտ մնացած է համոզուած, թէ Արուեստը վեր է բոլոր դասակարգերէն ու բոլոր բռնադատական ու ընկերական վարդապետութիւններէն, թէ անոր նպատակն է Բնութիւնն ու կեանքը իր բոլոր երեսներով հարազատօրէն արտայայտել՝ ներդաշնակ ու կենդանի գործերու մէջ, որոնք գերագոյն վայելքը կը կազմեն գեղասէր հոգիներուն:

Թադէոսեանի մասին Արամ Երեմեանի խղճամիտ յօդուածը շատոնց դրկուած էր Թիֆլիսէն՝ «Անահիտ»ի մէջ հրատարակուելու համար: Տեղի պակասը պատճառ եղաւ անոր ինչ մը ուշ լոյս տեսնելուն: Վերջերս, Երեւանի մէջ տեղի ունեցաւ Թադէոսեանի ցուցահանդէսը, ուր ի տես դրուած էին իր կարգ մը նկարներուն հետ՝ իր 400է աւելի էթիւտները· այդ ցուցահանդէսի միջոցին, Երեւանի գեղարուեստական ճաշակաւոր տիկնայք մամուլի մէջ անվերապահ ու խանդավառ գովեստներով գնահատեցին այս վարպետ նկարչին մեծ արժէքը: Այդ առթիւ ստացայ Գարեգին արքեպս· Յովսէփեանէն այդ ցուցահանդէսին նուիրուած ներհուն յօդուած մը զոր Երեմեանի յօդուածին հետ հաճոյքով կը հրատարակեմ՝ իբր գեղարուեստական վերլուծման թանկագին էջ մը որ կը լրացնէ զայն:

Ա· Չ·

digitised by A.R.A.R.@

Ե. ԹԱԴԷՈՍԵԱՆ

Հայ նկարչական կուլտուրայի առաջին շրջանում Ե. Թադէոսեանը առանձնայատուկ եւ ուրոյն տեղ է գրաւում: Նա պատկանում է այն արուեստագէտների շարքին, որոնք չեն սիրում խօսել եւ թմբկահարել, այլ լուռ ու մունջ, նուիրուած իրենց վրձինին, աշխատում են եւ առեղծագործում: Մի նկարիչ, որն իր վարպետ վրձինով հէնց առաջին հայեացքից գրաւում է ձեր ուշադրութիւնը, իշխում է ձեր սրտի, հոգու վրայ: Այդպէս են վարպետ, տաղանդաւոր նկարիչները: Այդպէս է Թադէոսեանն իր կտաւներով, իր երանգներով, իր ոճով:

Ուսանելի է մանաւանդ Թադէոսեանի առեղծագործութեան մօտեցումը. 1916 թուից մինչեւ օրս էլ աշխատում է նա մի թեմայի վրայ: Դա արդէն իսկական արուեստագէտի բնորոշ յատկանիշ է, մի պիծ, որից զուրկ են մեր արուեստագէտներից շատերը: Այդ բարեխիղճ եւ լուրջ ուսումնասիրութեան պիծը ժառանգել է նա Մոսկուայի Գեղարուեստական ճեմարանում. առանձնապէս նրա աշխարհայեացքի վրայ մեծ ազդեցութիւն է գործել նկարիչ Վասիլի Պալենովը: Եւ հէնց այդ է պատճառը, որ նրա նկարները կրում են լաւ դպրոցի եւ լրջմիտ վերաբերմունքի դրոշմ:

Իր նկարների մէջ Թադէոսեանը ցոլացրել է գլխաւորապէս իր ապրած հարազատ միջավայրի տեսարանները, գծել է այն, ինչ ծանօթ է իրեն եւ ուր անցել են նրա պատանեկութեան եւ հետագայ տարիները: «Օշական», «Մեր փողոցը Վաղարշապատում», «Արարատն Արեւմուտքին», «Արտածն էջմիածնից» նրա հարազատ ապրումների արդիւնքն են: Այդտեղից է, որ նրա նկարների մէջ կայ կօլորիտ, գոյների հարազատութիւն եւ որ գլխաւորն է, բանաստեղծական չունչ: Առհասարակ Թադէոսեանն իր նկարների նիւթերով, գոյների պայծառութեամբ, խաղով եւ լոյսի պաշտամունքով բանաստեղծ նկարիչ է: Բանաստեղծական վառ շնչով են գծուած երեւանի Պետական Թանգարանում գտնուող նկարները, ինչպէս եւ նրա հանրապարհորդական տպաւորութիւնները –

Ե. Թադէոսեան – «Մասիս» (նուիրուած Ա. Չ.ի՝ իր յոբելեանին առթիւ).

1693-55

ՀԵՏԱՆՈՍ ՊՐՈՖԻՐՍԻ
ГОС. БИБЛИОТЕКА
ZUUՈ-Арм.ССР

digitised by A.R.A.R.@

«Լուսնակ գիշեր Բէյրութի ափերին», «Պորտ Սայիտի նաւահանգստում»: Այդ նկարներում նկարիչն իր տպաւորութիւնները վերամշակել, դունաւորել է իր հոգու մէջ, ապա առարկայացրել պաստառի վրայ: Բացառութիւն են կազմում «Իմ երազանքներից» եւ այլ նկարները, որոնց մէջ զգալի է ռոմանտիզմը:

Մի քանի նկարների մէջ նկարիչը դրել է հոգեբանական վերլուծութիւն. նա կարողացել է տալ մարդու հոգեկան աշխարհի զանազան ապրումները: Այդպէս են նրա «Մադոննա»ն, «Հայ գեղջուկը». այդ նկարներում դուք զգում էք սիրող մօր եւ տանջուած գեղջուկի հոգեկան ապրումներն ու յոյսերը:

Իրրեւ նկարիչ՝ Թադէոսեանը բեղմնաւոր է. նկարել է նա 350 պատկեր, որոնք գտնւում են Էջմիածնի, Երեւանի, Թիֆլիսի թանգարաններում եւ զանազան տեղերում:

Կանգ չենք առնում Թադէոսեանի ալէգորիկ, վերացական նկարների եւ մօզայիկ պատկերների վրայ, որոնք նրա ստեղծագործութեան տարբեր մոտիւներն են ընդրկում:

ԿԵԱՆՔԻ ԳԾԵՐԸ

Ի՞նչ միջավայրի եւ դաստիարակութեան ծնունդ է Թադէոսեանը:

Թադէոսեանը ծնուել է 1870 թ. Մեպտ. 12-ին Վաղարշապատում: Նրա հայրը՝ Մարտիրոսը, ջրաղացպան էր, իսկ մայրը՝ Գայիանէ

Ե. Թադէոսեան.— Պարագիսի պատմութենից (*Panneau décoratif*) Նկարուած 1902-ին:

Յուդաւերդեանը, Ներսէս արքեպիսկոպոսի քոյրը: Մօր կողմից եղբէչն ժառանգում է նկարչական որոշ հակումներ. նրա մօրեղբայրը՝ Ներսէս արքեպիսկոպոսը, Մատթէոս Ա. կաթողիկոսի ժամանակ՝ նկարազարդում է կոնդակներ, իսկ հայրը՝ ժողովրդական աչուղ՝ ոչ միայն երգող, այլ եւ բանաստեղծող:

Եղբէչն մանկութեան չքնաղում շատ է սիրում խաղալ մի տեսակ ստեղծագործական խաղերով. նա ցեխից, արեւի տակ, տնակներ է շինում, իսկ մեղրամոմից աշխատում է ջահեր շի-

digitised by A.R.A.R.@

նել եւ կահաւորել տնակը: Այդպիսի խաղերով է անցնում նրա մանկութեան շրջանը: Մի նշանակալից դէպք նրա վրայ խոր ազդեցութիւն է գործում: 1877 թուի պատերազմին ռուս զինուորները լցւում են Վաղարշապատ: Առաջին անգամ նա տեսնում է մի զինուոր-նկարիչ երկաթուղին նկարելիս: Այդ նկարը մեծ հաճոյք է պատճառում ապագայ նկարչին: Այդ օրուանից նա իրենց տան գաջած պատերը մատիտով խզրտում է՝ նկարելով բարձրակրունկ, հրացանն ուսին, գլխին կեպկա դրած զինուորներ: Տարրական կրթութիւնն առանում է մեծ քրոջ մօտ: 1879 թուին մօրեղբօր հոգատարութեամբ ուղարկւում է Թիֆլիս՝ Տէր Յակոբեանների պանսիօնը: «Դա ինձ համար ամենամեծ հարուածն էր, — գրում է մեզ Թադէոսեանը, — խեղճ ծնողներս ինձ չէին կարողանում մխիթարել եւ երբ եկաւ հրաժեշտիս օրը՝ լաց ու կոծս տեւեց Վաղարշապատից մինչեւ էլարխց դէնը: աչքերս ուռեցին, կատարեալ սուգը պատեց վերաս, երբ Մասիս սարն աչքերիցս ծածկուեց: Աւելի տխրեցի, երբ Սեւանայ վանքերի սրտամ նա տեսնում է մի զինուոր-նկարիչ երկաթուղին նկարելիս: Այդ նկարը մեծ հաճոյք է պատճառում ապագայ նկարչին: Այդ օրուանից նա իրենց տան գաջած պատերը մատիտով խզրտում է՝ նկարելով բարձրակրունկ, հրացանն ուսին, գլխին կեպկա դրած զինուորներ: Տարրական կրթութիւնն առանում է մեծ քրոջ մօտ: 1879 թուին մօրեղբօր հոգատարութեամբ ուղարկւում է Թիֆլիս՝ Տէր Յակոբեանների պանսիօնը: «Դա ինձ համար ամենամեծ հարուածն էր, — գրում է մեզ Թադէոսեանը, — խեղճ ծնողներս ինձ չէին կարողանում մխիթարել եւ երբ եկաւ հրաժեշտիս օրը՝ լաց ու կոծս տեւեց Վաղարշապատից մինչեւ էլարխց դէնը: աչքերս ուռեցին, կատարեալ սուգը պատեց վերաս, երբ Մասիս սարն աչքերիցս ծածկուեց: Աւելի տխրեցի, երբ Սեւանայ վանքերի սրտա-



Ե. Թադէոսեան.— Աղբատ Ղազարոսի եւ մեծատան առակը (Նկարուած 1899–ին): Կը գտնուի այժմ Տարուսա քաղաքը, Փրոֆ. Պալենովի Թանգարանը:

ծայր գմբէթները կորան Սեմեոնովկայի տաբածութեան մէջ ... Այդ օրուանից էլ թշնամացայ ուսման հետ, որ չարունակեց մինչեւ հասունանալս ...»: Թիֆլիսում երկու տարի ուսանելուց յետոյ ուղարկում են նրան Մոսկուա, ուր մտնում է Լազարեան ճեմարանը: Այնտեղ չորս տարի ուսանելուց յետոյ, բանաստեղծ Յովհաննէս Յովհաննիսեանը նկատելով, որ նա առանձին հակում է ցոյց տալիս դէպի նկարչութիւնը եւ կազում է ուսման մէջ, յաջողացնում է, մօրեղբօր միջոցով, ընդունուել տալ Մոսկուայի Նկարչական Դպրոցը. « Դա իմ

digitised by A.R.A.R.@



Ե. Թադէոսեան — Դիմանկար Ա. Չ.-ի
1914 յուլիսիս Թրէփոր նկարուած, անաւարտ):

կեանքի ամենափայլուն շրջանն է, — գրում է մեզ նկարիչը: Այդտեղ ուսայ ես յայտնի նկարիչների հակողութեան տակ — Դեսեատով, Մորոկին, Մակովսկի, Նեւրև, Պալենով դրին իրենց ազդեցութեան կնիքը իմ վրայ: Դպրոցում բաւի մրցում եւ եռանդ էր տիրում բոլոր ուսանողներիս մէջ: Դասերէն առաջ գալիս էինք դպրոց եւ մեծ ոգեւորութեամբ պարապում մեր գործերով. վիճում էինք արուեստի շուրջ, թէ ո՞ր արուեստն է մեծ, գաղափարակա՞նը թէ արուեստն արուեստի համար ուղղութիւնը: Դպրոցից դուրս բաւականական սերտ կապերով կապուած էի Պրոֆ. Պալենովի և նրա քրոջ հետ. վերջիններս տանը, 1896 թուին, մի տարի մի քա-

digitised by A.R.A.R.@

Ե. Թադէոսեան.— Ասլան աղայի մեհնամարտը Գաբրիէլ հրեշտակին հետ (Հայ ժող. դիւցազներգէն ներշնչուած) որմանկար:

նի պատուէրներ կատարեցի օրիորդի հսկողութեան տակ, որի ազդեցութիւնը զօրեղ կերպով յեղաշրջեց իմ գեղարուեստական տեսակէտները: »

Թադէոսեանի վրայ որոշ ազդեցութիւն է անում հայ նկարիչներից Վարդգէս Սուրէնեանը, որի ծնողների մօտ ապրում է իրրեւ պանսիոներ:

Մոսկուայի Գեղարուեստական դպրոցը վերջացնելուց յետոյ Թադէոսեանը եօթ տարի ապրում է Մոսկուայում եւ ազատ աշխատանքի մէջ կատարելագործում է իր արուեստը: Այդ ժամանակ նա ստանում է երկու մրցանակ «Կէս օրուայ ճաշը» եւ «Մոլլայի քարոզը» նկարների համար: 1899 թուին իր ուսուցիչ Պալենովի հետ ճանապարհորդում է Պաղեստին, իսկ 1900 թուին Պալենովի քրոջ անունով (նրա մահից յետոյ) նշանակուած թոշակով ճանապարհորդում է Եւրոպա, այցելում է Բերլինի, Դրեզդէնի, Լայպցիկի, Նիւրնբերգի, Միւնխէնի պատկերասրահները: 1901 թուին փոխադրւում է Թիֆլիս եւ ուսուցչական պաշտօն ստանում տեղական Կովկասեան Ընկերութեան նուրբ արուեստը խրախուսողների դպրոցում, միաժամանակ պաշտօնավարում է հին առեւտրական դպրոցում մինչեւ 1923 թիւը: 1917 թուին Թիֆլիսում հիմնում է «Հայ Գեղարուեստագէտների Միութիւնը», որին մասնակցում է Թադէոսեանը իրրեւ հիմնադիր եւ ընտրւում է միութեան առաջին նախագահը:

1921 թուին Հայաստանի ժողովրդական

digitised by A.R.A.R.@

Ե. Թադէոսեան.— Մեր փողոցը Վաղարշապատի մէջ:
(Կը գտնուի Երեւանի Պետ. Թանգարանը)

յուսաւորութեան կամքաբիւրեայ հրաւէր է առանում Երեւան գնալ եւ հիմնել Գեղարուեստից Դպրոցը:

Այժմ նա ապրում է Թիֆլիսում, Անաստասովսկայա փողոցում գտնուող թիւ 11 տանը: Այդտեղ է նրա արհեստանոցը: Այդտեղ են նրա վարպետ վրձինի նմուշները: Այցելուները երկար կանգ են առնում նրա դեղարուեստական, վարպետ վրձինով կերտուած նկարների առջեւ, ապրում նրա արուեստի չնչով եւ նոր, քաղցր ապաւորութիւններով բաժանում: Այդ տունն են գալիս միշտ հայ, ռուս, վրացի նկարիչները, արուեստագէտները, բանաստեղծները, դիտելու խոշոր եւ վաստակաւոր արուեստագէտ — նկարչի մեծ գործերը ...:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

digitised by A.R.A.R.@